/Լոգոն/

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

քաղաք Մինսկ 23 նոյեմբերի 2021 թվական

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան՝ հետևյալ կազմով.

նախագահող դատավոր՝ Է.Վ. Հայրիյան,

զեկուցող դատավոր՝ Դ.Գ. Կոլոս,

դատավորներ՝ Ա.Մ. Ամիրբայիմովա, Ժ.Ն. Բայիշևա, Տ.Ն. Նեշատաևա, Վ.Խ. Սեյտիմովա, Գ.Ա. Սկրիպկինա, Ա.Է. Թումանյան, Ա.Ա. Ֆեդորցովա, Կ.Լ. Չայկա,

դատական նիստի քարտուղար Ա.Ա. Պիրոժկինի ներկայությամբ, ուսումնասիրելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին, ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության Դատարանի Ստատուտի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնակարգի 14-րդ, 19-րդ, 72-րդ, 75-րդ, 85-րդ հոդվածներով՝

ներկայացնում է սույն Խորհրդատվական եզրակացությունը՝ Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 92-րդ հոդվածի դրույթների պարզաբանման մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի վերաբերյալ:

I. Դիմողի ներկայացրած հարցը

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) դիմել է Եվրասիական տնտեսական միության Դատարան (այսուհետ՝ Դատարան) Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 92-րդ հոդվածի դրույթները պարզաբանելու մասին դիմումով (այսուհետ, համապատասխանաբար՝ Պայմանագիր, Միություն, պարզաբանման մասին դիմում):

Հանձնաժողովի կողմից Համաձայնագրի կատարման մշտադիտարկման ընթացքում բացահայտվել են անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից այնպիսի միջոցների կիրառման դեպքեր, որոնք, Հանձնաժողովի կարծիքով, հանգեցնում են անդամ պետությունների տարածքում արտադրված ապրանքների նկատմամբ խտրականությանը՝ ինչպես մյուս անդամ պետություններում արտադրված ապրանքների նկատմամբ, այնպես էլ Միության շուկայում շրջանառվող և երրորդ երկրներում արտադրված ապրանքների նկատմամբ: Առկա են երրորդ երկրների ապրանքներին Միության անդամ պետությունների ապրանքների դիմաց առավելությունների տրամադրման օրինակները:

Հանձնաժողովում քննարկումների ընթացքում Միության արդյունաբերական քաղաքականության մեջ անխտրականության սկզբունքի

ընկալման նկատմամբ ձևավորվել է երկու մոտեցում: Համաձայն առաջին մոտեցման, անդամ պետությունների կողմից վերը նշյալ միջոցների կիրառումը խախտում է անխտրականության սկզբունքը, որի հիման վրա, Պայմանագրի 92-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան, Միության շրջանակներում իրականացվում է արդյունաբերական քաղաքականությունը: Ընդ որում, դիրքորոշում է հայտնվել այն մասին, որ տվյալ սկզբունքի տարածումը միայն անդամ պետություններից ծագող ապրանքների վրա, միմյանց նկատմամբ, սակայն ոչ երրորդ երկրների ապրանքների վրա, հակասում է Պայմանագրի 92-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված նպատակներին: Երկրորդ մոտեցման համաձայն, Միության շրջանակներում արդյունաբերության քաղաքականության իրականացման ընթացքում անդամ պետությունները խտրականություն չպետք է դրսևորեն միայն միմյանց ապրանքների նկատմամբ, մինչդեռ երրորդ երկրների ապրանքների նկատմամբ անդամ պետությունների ապրանքների անխտրականությունը ամրագրված չէ Պայմանագրի 92-րդ հոդվածի դրույթներում:

Այդ կապակցությամբ, Հանձնաժողովի մոտ առաջացել է անխտրականության սկզբունքի գործողության շրջանակները (սահմանները) պարզելու անհրաժեշտություն. արդյոք այն նախատեսում է Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության իրականացման ընթացքում անդամ պետություններից ծագող ապրանքների համար երրորդ երկրներից ծագող ապրանքների համեմատ ոչ պակաս բարենպաստ պայմանների ապահովման պարտավորություն:

Դրա հետ մեկտեղ, ոչ միատեսակ ընկալում կա այն հարցում, թե արդյո՞ք անխտրականության սկզբունքի գործողությունը տարածվում է բացառապես Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից հաստատվող՝ արդյունաբերական քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացման ընթացքում անդամ պետությունների կողմից կիրառվող միջոցների վրա, թե անդամ պետությունների արդյունաբերական քաղաքականությունը, ընդհանուր առմամբ, պետք է հիմնված լինի անխտրականության սկզբունքի վրա:

Հանձնաժողովի կարծիքով, Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության իրականացման հիմքում ընկած անխտրականության սկզբունքը Պայմանագրում չի բացահայտվում անդամ պետությունների կողմից դրա միանշանակ մեկնաբանման և կիրառման համար բավարար աստիճան: Միևնույն ժամանակ, Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության իրականացման ընթացքում անդամ պետությունների կողմից անխտրականության սկզբունքի միօրինակ ընկալման և դրա պահպանման կամ խախտման փաստերը միանշանակ պարզելու հնարավորության համար պահանջվում է նշված սկզբունքի իրավական բովանդակության հստակեցում՝ դրա ազդեցության տակ ընկնող կոնկրետ դեպքերի առնչությամբ:

Վերը շարադրվածի հիման վրա Հանձնաժողովը Դատարանին խնդրում է տրամադրել խորհրդատվական եզրակացություն՝ Պայմանագրի 92-րդ հոդվածի նորմերի պարզաբանման մասին, հետևյալ հարցերի վերաբերյալ

Պայմանագրի այլ դրույթների հետ համակարգային փոխկապակցվածությամբ.

1) արդյոք Պայմանագրի 92-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետում ամրագրված անխտրականության սկզբունքի գործողությունը տարածվում է Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության ամբողջ ոլորտի, այդ թվում՝ արդյունաբերական սուբսիդիաների տրամադրման վրա, թե միայն Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից հաստատվող՝ արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրականացման շրջանակներում առկա հարաբերությունների վրա:

2) արդյոք Պայմանագրի 92-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետում ամրագրված անխտրականության սկզբունքը նախատեսում է Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության իրականացման ընթացքում անդամ պետություններից ծագող ապրանքների համար երրորդ երկրներից ծագող ապրանքների համեմատ ոչ պակաս բարենպաստ պայմանների ապահովման պարտավորության առկայություն:

Դատարանի մեծ կոլեգիայի որոշմամբ, 2021 թ. սեպտեմբերի 20-ին պարզաբանման մասին դիմումն ընդունվել է վարույթ:

Խորհրդատվական եզրակացության պատրաստման ընթացքում Դատարանը ստացել է Հանձնաժողովի, Ղրղզստանի Հանրապետության էներգետիկայի և արդյունաբերության նախարարության, Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության և առևտրի նախարարության, Երևանի պետական համալսարանի, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Պետության և իրավունքի ինստիտուտի, Ղազախստանի Հանրապետության Օրենսդրության և իրավական տեղեկատվության ինստիտուտի, Ռուսաստանի Դաշնության Կառավարությանն առընթեր Օրենսդրության և համեմատական իրավագիտության ինստիտուտի, Կազանի (Մերձվոլգիան) դաշնային համալսարանի, Ժ. Բալասագընի անվան Ղրղզստանի ազգային համալսարանի, Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (համալսարանի), Սարատովի պետական իրավաբանական ակադեմիայի պատասխանները:

II. Դատարանի եզրակացությունները

Դատարանի իրավասությունը ներառում է Պայմանագրի, Միության շրջանակներում միջազգային կնքվող պայմանագրերի և Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանումը (Պայմանագրի 2-րդ հավելվածը հանդիսացող Դատարանի Ստատուտի (այսուհետ՝ Ստատուտ) 46-րդ կետ):

Պարզաբանումը իրականացնելիս, Դատարանը կիրառում է՝

1) միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքները և նորմերը.

2) Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը և այլ միջազգային պայմանագրեր, որոնց մասնակիցները

վեճի կողմ հանդիսացող պետություններն են.

3) Միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները.

4) միջազգային սովորույթը՝ որպես համընդհանուր գործելակերպի ապացույց, որը ճանաչված է որպես իրավական նորմ (Ստատուտի 50-րդ կետ):

1. Պայմանագիրը պարունակում է «Արդյունաբերությունը» XXIV-րդ բաժինը, որի առանձին կառուցվածքային տարրերն են հանդիսանում «Արդյունաբերական քաղաքականությունը և համագործակցությունը» 92-րդ հոդվածը և «Արդյունաբերական սուբսիդիաները» 93-րդ հոդվածը:

Ըստ Պայմանագրի 92-րդ հոդվածի բավանդակության նախատեսված է, որ Միության իրավունքում առկա է արդյունաբերական քաղաքականությունների երկու տեսակ՝ Միության անդամ պետություններից յուրաքանչյուրի ազգային արդյունաբերական քաղաքականությունը և Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականությունը: Դիմումատուի հարցի պատասխանը պահանջում է պարզաբանել նշված քաղաքականություններից յուրաքանչյուրի բովանդակությունը և Պայմանագրի «Արդյունաբերությունը» XXIV-րդ բաժնով կարգավորվող իրավահարաբերությունների հետ կապված միջոցների ընդունման ժամանակ անդամ պետությունների հայեցողության աստիճանը:

Պայմանագրի 92-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, անդամ պետություններում ազգային արդյունաբերական քաղաքականությունները հիմնված են ազգային օրենսդրության նորմերի վրա և իրացվում են անդամ պետությունների կողմից, այդ թվում, Պայմանագրի 93-րդ հոդվածի և Պայմանագրի 28-րդ հավելվածը հանդիսացող (այսուհետ՝ 28-րդ հավելված) Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին արձանագրության պահանջների պահպանմամբ: Այսպես, Պայմանագրի 93-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված է, որ անդամ պետությունների տնտեսությունների կայուն և արդյունավետ զարգացման համար պայմաններ, ինչպես նաեւ անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի զարգացմանը և բարեխիղճ մրցակցությանը նպաստող պայմաններ ապահովելու նպատակներով անդամ պետությունների տարածքներում գործում են արդյունաբերական ապրանքների համար, այդ թվում (սույն Պայմանագրի 28–րդ հավելվածի համաձայն)՝ արդյունաբերական ապրանքների արտադրության, իրացման և սպառման հետ անմիջականորեն կապված ծառայությունների մատուցման կամ ստացման դեպքում սուբսիդիաների տրամադրման միասնական կանոններ:

Պայմանագրի 93-րդ հոդվածի 1-ին կետում ձևակերպված նպատակները համաձայնեցվում են Միության՝ Պայմանագրի 3-րդ, 4-րդ հոդվածներում ամրագրված սկզբունքների և նպատակների հետ:

Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականությունը նորմատիվորեն սահմանվել է որպես արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններով՝ անդամ պետությունների գործունեություն, որը անդամ պետությունների կողմից իրականացվում է ինչպես ինքնուրույն, այնպես էլ Հանձնաժողովի խորհրդատվական աջակցության և համակարգման ներքո (Պայմանագրի 27-

րդ հավելվածը հանդիսացող՝ Արդյունաբերական համագործակցության մասին արձանագրության 1-ին կետ):

Միության շրջանակներում անդամ պետությունները ձևավորում են արդյունաբերական քաղաքականություն՝ ըստ արդյունաբերական համագործակցության՝ Միջկառավարական խորհրդի կողմից հաստատվող հիմնական ուղղությունների (Պայմանագրի 92-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերություն): Այսպես, ներկայումս գործում է Եվրասիական միջկառավարական խորհրդի 2021 թ. ապրիլի 30-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության մինչև 2025 թվականը հիմնական ուղղությունների մասին» N 5 որոշումը:

Պայմանագրի 92-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականությունն իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) իրավահավասարություն և անդամ պետությունների ազգային շահերի հաշվի առնում.

2) փոխշահավետություն.

3) բարեխիղճ մրցակցություն.

4) անխտրականություն.

5) թափանցիկություն:

Պայմանագրում սահմանվել են Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության իրականացման նպատակները (Պայմանագրի 92-րդ հոդվածի 3-րդ կետ), որոնցից են արդյունաբերական զարգացման արագացումը և կայունության բարձրացումը, անդամ պետությունների արդյունաբերական համալիրների մրցունակության բարձրացումը, նորարարական ակտիվության բարձրացմանն ուղղված արդյունավետ համագործակցության իրականացումը, արդյունաբերական ոլորտում, այդ թվում՝ անդամ պետությունների արդյունաբերական ապրանքների տեղաշարժի ճանապարհին խոչընդոտների վերացումը:

Պայմանագրի 92-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսվել են Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության իրականացման նպատակներն իրագործելու համար անդամ պետությունների կողմից իրականացվող միջոցները, որոնց ցանկը կրում է բաց բնույթ, ինչպես նաև Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշմամբ դրանց իրացման համապատասխան կարգերի մշակման հնարավորություն:

Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության սկզբունքները, այդ թվում՝ անխտրականության սկզբունքը, ինչպես նաև արդյունաբերական քաղաքականության իրականացման նպատակները և նշված նպատակներին հասնելու համար միջոցներն իրականացվում են Միության անդամ պետությունների կողմից:

Պայմանագրի «Արդյունաբերությունը» XXIV-րդ բաժնում կարգավորված հարցերի վերաբերյալ Միությունում իրականացվող քաղաքականության տեսակներով պայմանավորված անդամ պետությունների հայեցողության աստիճանը որոշելիս, Դատարանի մեծ կոլեգիայի նշում է հետևյալը՝

Պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն կողմերը հիմնադրում են Միությունը, որի շրջանակներում, ի թիվս այլոց, ապահովվում է Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսության ճյուղերում համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը:

Պայմանագրի 2-րդ հոդվածի համաձայն, միասնական քաղաքականությունը՝ դա քաղաքականություն է, որը ենթադրում է անդամ պետությունների կողմից միասնականացված իրավական կարգավորում, այդ թվում՝ Միության մարմինների որոշումների հիման վրա:

Համակարգված քաղաքականությունը՝ քաղաքականություն է, որը ենթադրում է անդամ պետությունների համագործակցություն Միության մարմինների շրջանակներում հավանության արժանացած ընդհանուր մոտեցումների հիման վրա, որոնք անհրաժեշտ են Միության՝ Պայմանագրով նախատեսված նպատակներն իրագործելու համար:

Համաձայնեցված քաղաքականությունը՝ անդամ պետությունների կողմից իրականացվող քաղաքականություն է, որը ենթադրում է ազգային իրավական կարգավորման ներդաշնակեցում:

Հետևաբար, Պայմանագիրը նախատեսում է, որ Միությունում քաղաքականությունների վերը նշված տեսակների իրագործման միջոցով նախատեսվել է ինտեգրման տարբեր աստիճան՝ կախված հարաբերությունների կոնկրետ ոլորտներից:

Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականությունը՝ համակարգված քաղաքականություն է, որն իրականացվում է Հանձնաժողովի խորհրդատվական աջակցության և համակարգման ներքո՝ Միությունում համաձայնեցված ընդհանուր մոտեցումների հիման վրա, սակայն, հաշվի առնելով այն մոտեցումները, որոնք շարադրված են Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններում: Ընդ որում, անդամ պետություններն ինքնուրույն են ձևավորում ազգային արդյունաբերական քաղաքականությունները, որոնք կողմնորոշված են կոնկրետ պետության տնտեսության կարիքների բավարարմանը:

Անդամ պետությունների ազգային արդյունաբերական քաղաքականության շրջանակներում սուբսիդիաների նկատմամբ գործում են հատուկ և արգելված արդյունաբերական սուբսիդիաների տրամադրման միասնական կանոններ (միասնականացված կարգավորում), Հանձնաժողովն օժտված է անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրումը համաձայնեցնելու, մի անդամ պետության կողմից հատուկ սուբսիդիայի տրամադրման ժամանակ մյուս անդամ պետության ազգային տնտեսության ճյուղի վնաս հասցնելու վերաբերյալ քննություններ անցկացնելու և անդամ պետության համար պարտադիր որոշում կայացնելու լիազորություններով, որի չկատարման դեպքում մյուս անդամ պետությունը ստանում է դատարան դիմելու իրավունք (28-րդ հավելվածի 6-րդ կետ) 2017 թ. մայիսի 26-ի Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ

սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու եվ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին համաձայնագիր):

2. Ինչպես նշում է դիմումի մեջ Հանձնաժողովը, Պայմանագրի 92-րդ հոդվածում անխտրականության սկզբունքի բավանդակությունը չի բացահայտվում: Այդ կապակցությամբ Դատարանի մեծ կոլեգիան, պարզաբանելով անխտրականության սկզբունքի նորմատիվային բավանդակությունը, հաշվի է առնում 1969 թ. մայիսի 23-ի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված՝ միջազգային պայմանագրերի մեկնաբանման կանոնները, որոնց համաձայն պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո:

Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության ոլորտի այն համար, որը կարող է ազդեցություն ունենալ դրա հետ կապված հարաբերությունների վրա, ամրագրվել է անխտրականության սկզբունքը (Պայմանագրի 92-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետ):

Դիտարկելով Միությունը որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի միջազգային կազմակերպություն, որտեղ երաշխավորված են ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի տեղաշարժի չորս ազատությունները (Պայմանագրի 1-ին հոդված), որը գործում է մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի սկզբունքների, նպատակների և դրանց համապատասխանող նորմերի հիման վրա, Դատարանի Մեծ կոլեգիան եզրակացնում է, որ Միությունում տնտեսական հարաբերությունների կարգավորման ժամանակ պետք է ստեղծվեն բարեխիղճ մրցակցության և փոխադարձ առևտրի համար հավասար պայմաններ, որոնց հիմքում ընկած է անխտրականության սկզբունքը:

Գործողության հիմնական սկզբունքների և նպատակների հետ մեկտեղ, Պայմանագիրը պարունակում է նորմեր, որոնք ուղղակիորեն կամ միջնորդավորված կերպով սահմանում են մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի գործունեության անխտրական պայմաններ:

Ապրանքների ներքին շուկայի գործունեության շրջանակներում փոխադարձ առևտրի համար Պայմանագրով նախատեսվել է անդամ պետությունների կողմից որոշ դեպքերում սահմանափակումներ կիրառելու իրավունք, սակայն պայմանով, որ այդ միջոցներն անհիմն խտրականության միջոց կամ առևտրի քողարկված սահմանափակում չլինեն (Պայմանագրի 29-րդ հոդված): Դրանով իսկ անդամ պետությունների կողմից սահմանափակող միջոցների կիրառման հնարավորությունը պայմանավորված է անխտրական սկզբունքի պահպանմամբ:

Ապրանքների արտաքին առևտրի նկատմամբ Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի 1994 իմաստով (այսուհետ՝ ՍԱԳՀ 1994) առավել

բարենպաստության ռեժիմը կիրառվում է այն դեպքերում և պայմաններով, երբ առավել բարենպաստության ռեժիմի կիրառումը նախատեսված է երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև անդամ պետությունների՝ երրորդ կողմի հետ կնքվող միջազգային պայմանագրերով (Պայմանագրի 34-րդ կետ):

Պայմանագրի պրեամբուլան, որտեղ հաշվի են առնվել Առևտրի համաշխարհային կազմակերպության նորմերը, կանոնները և սկզբունքները, Պայմանագրի այլ նորմերը, ներառյալ՝ Պայմանագրի 31-րդ հավելվածը հանդիսացող Բազմակողմ առևտրային համակարգի շրջանակներում Եվրասիական տնտեսական միության գործունեության մասին արձանագրությունը, որով նախատեսվում է Բազմակողմ առևտրային համակարգի շրջանակներում Մաքսային միության գործունեության մասին 2011 թ. մայիսի 19-ի պայմանագրով համապատասխան հարաբերությունների կարգավորում, վկայում են, որ Միության իրավունքը ճանաչում է անդամ պետությունների պարտավորությունները Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում:

Բազմակողմ առևտրային համակարգի շրջանակներում Մաքսային միության գործունեության մասին 2011 թ. մայիսի 19-ի պայմանագրի պրեամբուլան նշում է անդամ պետությունների առևտրային ռեժիմները Առևտրի համաշխարհային կազմակերպության հիմնադրման մասին Մարաքեշյան համաձայնագրի (կնքվել է ք. Մարաքեշում 1994 թ. ապրիլի 15-ին), համատեքստում մեկնաբանելու անհրաժեշտությունը, որի II-րդ հոդվածի 2-րդ կետի անբաժանելի մասն է կազմում 1947 թվականի հոկտեմբերի 30-ի Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի դրույթները ներառող ՍԱԳՀ 1994-ը:

ՍԱԳՀ 1994-ի I-ին հոդվածի համաձայն, առավել բարենպաստությունից օգտվող ազգի ռեժիմը ենթադրում է, որ ցանկացած առավելությունը, բարենպաստությունը, արտոնությունը կամ իմունիտետը, որոնք ցանկացած Պայմանավորվող Կողմ տրամադրում է ցանկացած այլ երկրից ծագող կամ դրա համար նախատեսված ցանկացած ապրանքին, պետք է անմիջապես և անպայման տրամադրվի բոլոր մյուս Պայմանավորվող Կողմերի տարածքներից ծագող կամ դրանց համար նախատեսվող համանման ապրանքին:

Այս դրույթին համապատասխան, Պայմանագրի 34-րդ հոդվածից ելնելով, ապրանքների արտաքին առևտրի նկատմամբ կիրառվում է ՍԱԳՀ 1994-ի իմաստով առավել բարենպաստության ռեժիմ:

Ելնելով վերը շարադրվածից՝ Դատարանի մեծ կոլեգիան եզրակացրել է, որ ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի տեղաշարժի ազատություն ապահովմանն ուղղված անխտրականության սկզբունքը երաշխավորում է անդամ պետությունների ապրանքներին՝ երրորդ երկրներից ծագող ապրանքների համեմատ ոչ պակաս բարենպաստ պայմանների տրամադրում:

Ընդ որում, Դատարանի մեծ կոլեգիան արձանագրում է, որ անդամ պետությունների կողմից երրորդ երկրներից ծագող ապրանքների համար անդամ պետությունների ապրանքների համեմատ ավելի բարենպաստ

պայմանների ստեղծմանն ուղղված միջոցների կիրառումը չի համաձայնեցվում Միության գործունեության հիմնական սկզբունքների և նպատակների հետ:

3. Հաշվի առնելով վերը շարադրվածը, Դատարանի մեծ կոլեգիան տրամադրում է Հանձնաժողովի հարցերի հետևյալ պատասխանները՝

3.1. Պայմանագրի 92-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետում ամրագրված անխտրականության սկզբունքի գործողությունը տարածվում է Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության ամբողջ ոլորտի վրա: Արդյունաբերական սուբսիդիաները հանդիսանում են իրավական կարգավորման առանձին ոլորտ, որը նախատեսված է Պայմանագրի 93-րդ հոդվածով:

3.2. Պայմանագրի 92-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետում ամրագրված անխտրականության սկզբունքը նախատեսում է Միության անդամ պետությունների պարտավորությունները՝ ինչպես անդամ պետությունների, այնպես էլ երրորդ երկրների արդյունաբերական ապրանքների համար ապահովել առավել բարենպաստության ռեժիմ:

III. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենը ուղարկել Հանձնաժողով:

Խորհրդատվական եզրակացության տեքստը հրապարակել Դատարանի պաշտոնական համացանցային էջում:

Նախագահող՝ Է.Վ. Հայրիյան

Դատավորներ՝ Ա.Մ. Աժիբրայիմովա
Ժ.Ն. Բայիշև
Դ.Գ. Կոլոս
Տ.Ն. Նեշատաևա
Վ.Խ. Սեյտիմովա
Գ.Ա. Սկրիպկինա
Ա.Է. Թումանյան
Ա.Ա. Ֆեդորցովա
Կ.Լ. Չայկա

Պատճենը ճիշտ է՝ զեկուցող դատավոր /*Ստորագրություն*/ Դ.Գ. Կոլոս

Կնիք. *Եվրասիական տնտեսական միության դատարան * Մինսկ*